



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍՍԱԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՄԵՆՑԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2021 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2021, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am
Ե/2019- 10.03/149
10.03.2019թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Անդրեյ Ղուկասյանին

Հարգելի պարոն մարզպետ,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դրույթները խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե՛

1. ՀՀ Լոռու մարզի Բովաձոր համայնքին մատակարարվող ջուրը պիտանի է՞ խմելու և կենցաղում օգտագործելու համար, թե ոչ,
2. եթե Բովաձոր համայնքին մատակարարվող ջուրը պիտանի չէ խմելու և կենցաղում օգտագործելու համար, ապա ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել Բովաձոր համայնքին մատակարարվող ջուրը խմելու և կենցաղում օգտագործելու համար պիտանի դարձնելու նպատակով,
3. եթե Բովաձոր համայնքին մատակարարվող ջուրը պիտանի չէ խմելու և կենցաղում օգտագործելու համար, ապա ե՞րբ է նախատեսվում պիտանի դարձնել Բովաձոր համայնքին մատակարարվող ջուրը խմելու և կենցաղում օգտագործելու համար, ի՞նչ միջոցներով,
4. ՀՀ Լոռու մարզի Բովաձոր համայնքում խմելու ջրի ջրագիծ (խմելաջրի ներքին ցանց) կառուցելու համար երբևէ ներդրում արվել է՞, թե ոչ,
5. եթե Բովաձոր համայնքում խմելու ջրի ջրագիծ կառուցելու ներդրում երբևէ արվել է, ապա ու՞մ կողմից, ի՞նչ չափով, ո՞ր թվականին,
6. եթե Բովաձոր համայնքում խմելու ջրի ջրագիծ կառուցելու ներդրում երբևէ արվել է, ապա խմելու ջրի ջրագիծ կառուցվել է՞, թե ոչ, եթե չի կառուցվել ապա ի՞նչ պատճառներով,



7. եթե Բովաձոր համայնքում խմելու ջրի ջրագիծ կառուցելու ներդրում երբևէ արվել է, ապա խմելու ջրի ջրագիծ կառուցելու համար անհրաժեշտ աշխատանքները ո՞ր ընկերության (կազմակերպության) կողմից են կատարվել, ի՞նչ աշխատանքներ են կատարվել նշված ընկերության կողմից և որքա՞ն է կազմել նշված աշխատանքները կատարելու համար ընկերությանը վճարվող գումարի չափը,


Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
Կազմակերպության նախագահ՝


Կատարող՝ Շ. Հակոբյան
Էլ. հասցե՝ hhakobyan@hcav.am
Հեռ.՝ 094042268



Արթուր Սարունց



Ա. Մարունց
 Հելսինկյան Քարաբացիական Աստվերեայի փանաձորի
 գրասենյակի նշնագրակ
 Գրասենյակի Մեճ ԴՅ
 2001, ք. Վանաձոր



Ա. Դովկասյան
 ՀՀ Լոռու մարզպետ
 Հայքի հրապարակ,
 2001, ք. Վանաձոր

